սում է. «Ճակտի վրայ կենաց շիկնոտ ժպիտը կը տժգունի, քնարը կը թօթուէ, անհուն «մնաս բարովի»ի մը համար անո՛նց, որոնք իրենց սրտին ծալքերը չբացին»։ Դրա համար, յուսահատութեամբ գրում է, որ «բանաստեղծ մը մահուանէ չսոսկար. այն ատեն իրաւունք ունէի ցաւելու, երբ ամէնքն անմահ ըլլային եւ ես միայն մահկանացու»։

Այնուհետեւ նա արդէն հաշտւում է մեռնելու դաղափարի հետ եւ իրեն համարում է «անդունդն հսկող» մի անձ, որ «յուսահատութիւն՝ գերեզմանի այդ սեւ կաթն» է խմում, իբրեւ «նոնեաց դալկահար որդեգիր»...

«Եթէ նակտիս վրայ վարդ ունենայի, կիները զիս պիտի սիրէին. ա՛հ, աւելի լաւ է, որ դալուկն ունիմ եւ բանաստեղծները զիս կը սիրեն»։

Մի ուրիշ տեղ էլ ասում է համեստութեամբ «բանաստեղծ չեմ, բայց բանաստեղծութիւնը կը սիրեմ... Ես որ աշխարհի վրայ միայն երգերը շատ սիրեցի, կ'ուզեմ որ վերջին շունչս ալ երգ մ'ըլլայ»։

«Գեղեցիկ կեանք մ'ալ կայ, սէրն է այդ. երգել, աղօթել եւ սիրել. ա՛հ, ի՜նչ բանաստեղծական կեանք, ի՜նչ կատարեալ կեանք»։

Եւ տրտունջների ու հեծեծանքների երգիչը բանաստեղծօրէն հրաժեշտ է տալիս այդ կեանքին՝ խնդրելով «արցունքի տեղ՝ դագաղիս վրայ երկու խօսք, հառաչանքի տեղ՝ երկու շունչ աղօթք հոգւոյս համար, եւ վշտի տեղ՝ երկու փունջ ծաղիկ գերեզմանիս վրայ, ես ալ մեռած պիտի չըլլամ, միշտ դալար ու կենդանի պիտի մնամ»։

Դուրեանը մեռաւ ծաղիկ հասակում եւ չիմացաւ, որ իր յիշատակին ոչ թէ միայն դաղաղի վրայ, այլ եւ տասնեակ տարիների ընթացքում չարունակ հանդէսներում եւ թերթերում խորին համակրութեան խօսքեր են արտասանւում եւ երգեր մրմնջում։ Նա չիմացաւ որ հէնց իր թողած տաղերն են հիւսում դալար ու կենդանի այն ծաղկեփունջը, որի բուրմունքով յագենում են բոլոր տոչորուող, սիրող եւ տանջուող, կեանքից զրկուած ու փոթորկուող հոգիները...

V. ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դուրեանի թատերգութիւնները՝ տպագիր եւ ձեռագիր՝ ընդամէնն ինը հատ են եւ գրուած են հետեւեալ կարգով։ — 1) Վարդ եւ Շուշան, 1867 թ., 2) Սեւ Հողեր 1868 թ., 3) Արտաշէս 1869 թ., 4) Անկումն առաջին հարստութեան 1870 թ., 5) Ասպատակութիւնք 1870 թ., 6) Կործանումն Հռոմայ, 7) Շուշանիկ, 8) Տիգրան Բ. եւ 9) Թատրոն կամ Թշուառներ։

Վերջին չորս թատերգութիւնները գրուած են 1871 թուին, այսինքն՝ իր կեանքի վերջին տարում։ Նոյն թուին է նա գրել իր բանաստեղծութիւնների մեծագոյն մասը եւ այն էլ ամենաընտիրները։

Եթէ մի տարում որակով եւ քանակով այդքան բեղմնաւոր է եղել նրա գրիչը, հապա ինչ՞ը պիտի արտադրէր հետագայ տարիներում, եթէ միայն անաղորոյն թոքախտին զոհ չդնար։

Ինը թատերգութիւններից եօթը պատմական ողբերգութիւններ են, իսկ երկուսը ոչ էլ բովանդակութիւն ունին։ Պատմականներից տպագրուած են՝ «Սեւ Հողեր», «Ասպատակութիւնք կամ Անիի կործանումը» եւ «Անկումն Արշակունի հարստութեան»։ Պատմական միւս ողբերգութիւնները, թուով չորս հատ, ձեռագիր են, անտիպ. դրանք են՝ «Արտաշէս», «Կործանումն Հռոմայ», «Շուշանիկ», եւ «Տիգրան Բ.»։ Երկու իրական ողբերգութիւնները նոյնպէս տպագրուած են. դրանք են՝ «Վարդ եւ Շուշան» եւ «Թատրոն կամ Թշուառները»։

Դուրեանը կարդացել էր իր ուսուցչի՝ Սրապիոն Թղլեանի՝ թատերգութիւնների ձեռագիրները, տեսել էր նրանց ներկայացումը, յաճախել էր թատրոն, շատ անգամ հօրից ծածուկ, տեսել էր Հիւգոյի, Շիլլերի, Շէյքսպիրի թատերգութիւնների բեմադրութիւնը, ինքն եղել էր դերասանական խմբում, կատարել էր դերեր բաւական յաջող կերպով եւ մեծապէս ազդուել էր այդ խաղերի ընթացքում, ուստի եւ զարմանալի չէ, որ գրել է դրամաներ։

Խօսք չկայ, որ բանաստեղծ Դուրեանը գլխովին բարձր է թատերագիր Դուրեանից, բայց եթէ նրան համեմատելու լինենք իր ժամանակակից միւս թատերագիրների հետ, կը տեսնենք որ Դուրեանը նրանցից շատ բանով